ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.02.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 03/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի 23.01.2017թ. ներկայացրած բողոքը և կից նյութերը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-03/17 բողոք), «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ) 31.01.2017թ. թիվ 010/01.17 և Երևանի քաղաքապետարանին ուղղված գրությունները, ինչպես նաև ԳԲԽ-03/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 09.02.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **«ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 23.01.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ մասնակցել է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար Երևան քաղաքի վարչական շրջանների բակերի, միջբակային ճանապարհների և մայթերիր ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/43» ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը. քանի որ Ընթացակարգը պետք է տեղի ունենար էլեկտրոնային տարբերակով, հետևաբար «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից հայտը կազմվել և Երևանի քաղաքապետարանին ներկայացվել է էլեկտրոնային հայտ ներկայացնելու կարգի և էլեկտրոնային

ստորագրություն ներկայացնելու ձևին համապատասխան: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը արձանագրել է, որ հնարավոր չէ գնահատել «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված թիվ 9-ի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելը, ուստի հանձնաժողովը որոշել է ընդհատել գնման ընթացակարգի բացման նիստը և հարցում ներկայացնել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին՝ մասնակցի կողմից ներկայացված հավելված թիվ 9-ի էլեկտրոնային ստորագրության իսկությունը ճշտելու նպատակով: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2017թ. թիվ 3 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ հանձնաժողովը արձանագրել է, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն՝ «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված թիվ 9-ը, որպես էլեկտրոնային փաստաթուղթ չի կարող համարվել էլեկտրոնային ստորագրությամբ ամրագրված էլեկտրոնային փաստաթուղթ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որևէ որոշում չի կայացվել, այլ հանձնաժողովը առանց Ընկերության հայտը մերժելու՝ շարունակել է գնման ընթացակարգը և սահմանել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին:

Ընկերությունը ներկայացված բողոքով տեղեկացրել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված պահանջները, քանի որ Օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը: Տվյալ պարագայում «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ին մերժելու մասին որոշումը առհասարակ բացակայում է:

Ընկերությունը բողոքով մեջբերել է ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջները, մատնանշելով, որ Ընկերության կողմից պահպանվել են այդ պահանջները, իսկ որպես ապացույց ներկայացրել է հավելված թիվ 9 փաստաթուղթը՝ էլեկտրոնային ստորագրված լինելու վերաբերյալ ապացույցը, ավելացնելով, որ փաստաթղթերը, ըստ Պատվիրատուի և ըստ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի, ստորագրված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ բացառությամբ հավելված թիվ 9-ի, ինչը բավականին տարօրինակ է, քանի որ բոլոր փաստաթղթերը կազմվել և ստորագրվել են միաժամանակ: Եվ ո՞նց է ստացվել, որ Կարգի 45-րդ կետով նախատեսված շտկման հնարավորություն չունեցող փաստաթղթի հետ են առաջացել

խնդիրներ, այլ ոչ թե՝ մնացած այլ փաստաթղթերի, որոնց համար նախատեսված է շտկելու հնարավորություն: Սակայն, չնայած այդ հանգամանքին, «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից հավելված թիվ 9-ը ստորագրվել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը երևում է փաստաթղթի արտատպման դեպքում:

Ընկերությունը, որպես բողոքի իրավական հիմք, վկայակոչել է Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները:

Ընկերությունը, գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը, քանի որ գնման ընթացակարգը շարունակելու դեպքում՝ Խորհրդի կողմից բողոքը բավարարելու պարագայում, կդժվարեցնի որոշման կատարումը
2. դադարեցնել «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/43» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2017թ. N 3 արձանագրությամբ «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի հայտը մերժելու և/կամ «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված թիվ 9-ը, որպես էլեկտրոնային փաստաթուղթ չհամարելու էլեկտրոնային ստորագրությամբ ամրագրված էլեկտրոնային փաստաթուղթ ճանաչելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 26.01.2017թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-03/17 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի ներկայացուցիչները բողոքը պնդել են ամբողջությամբ:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 06.02.2017թ. թիվ 02/61-4425Հ գրությամբ Կենտրոն է ներկայացրել դիրքորոշումը և Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, այդ թվում նաև՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի գրությունը:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է հետևյալը. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/43» ծածկագրով գնման ընթացակարգին

www.arpeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրությունը, արձանագրել է, որ էլեկտրոնային հայտով ներկայացված թիվ 9 հավելվածի էլեկտրոնային ստորագրությունում առկա են թերություններ և ստորագրությունների իսկությունը ստուգելը հնարավոր չէ, քանի որ համակարգիչը վերջինիս կողմից հայտով ներկայացված թիվ 9 հավելվածը, որպես թվային էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չի ճանաչում: Երևանի քաղաքապետարանը Ընկերության հայտով ներկայացված թիվ 9 հավելվածը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու հանգամանքը ճշտելու նպատակով հարցում է ուղարկել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ: «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված փաստաթուղթը չի պարունակում որևէ անձի էլեկտրոնային ստորագրություն: Ենթադրվում է, որ այն ստորագրված է եղել Գասպարյան Լարիսայի կողմից, սակայն փաստաթղթի կոնվերտացիայի ժամանակ էլեկտրոնային ստորագրությունը փոփոխության է ենթարկվել: Հետևաբար, նշված փաստաթուղթը չի կարող համարվել էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված փաստաթուղթ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով, մերժել է «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի հայտը:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ 03/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-03/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-03/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի վարչական շրջանների բակերի, միջբակային ճանապարհների և մայթերիր ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-

ԲԸԱՇՁԲ-17/43» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով www.arpeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել նաև «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ հնարավոր չէ գնահատել «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված թիվ 9-ի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելը, ուստի հանձնաժողովը որոշել է ընդհատել գնման ընթացակարգի բացման նիստը և հարցում ներկայացնել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ՝ Ընկերության կողմից ներկայացված հավելված թիվ 9-ի էլեկտրոնային ստորագրության իսկությունը ճշտելու նպատակով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 1.3-րդ կետով արձանագրվել է, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն՝ «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված թիվ 9-ը, որպես էլեկտրոնային փաստաթուղթ չի կարող համարվել էլեկտրոնային ստորագրությամբ ամրագրված էլեկտրոնային փաստաթուղթ, ուստի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության 2.2 կետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

4. Պատվիրատուն 16.01.2017թ. գրությամբ՝ առաջնորդվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված դրույթներով, հարցում է կատարել էլեկտրոնային ստորագրությունը սպասարկող ԷԿԵՆԳ ՓԲԸ-ին, վերջինիս տրամադրելով «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր հավելվածների էլեկտրոնային և թղթային տարբերակները, խնդրելով հայտնել, արդյոք Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը համարվում են էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված, թե՝ ոչ:

5. Վերոհիշյալ գրությանն ի պատասխան՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ-ն հայտնել է, որ Ընկերության կողմից PDF ձևաչափով ներկայացված հավելված թիվ 9 փաստաթուղթը ***չի պարունակում որևէ անձի էլեկտրոնային ստորագրություն***: Ենթադրվում է, որ այն ստորագրված է եղել Գասպարյան Լարիսայի (6109570095) կողմից, սակայն փաստաթղթի կոնվերտացիայի ժամանակ էլեկտրոնային ստորագրությունը փոփոխության է ենթարկվել: ***Հետևաբար, նշված փաստաթուղթը չի կարող համարվել էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված փաստաթուղթ:***

6.Նիստի ժամանակ ԳԲԽ-03/17 բողոքը քննող հանձնաժողովը ուսումնասիրել է Ընկերության կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված հայտի PDF

ֆայլերի էլեկտրոնային ստորագրությունները, բոլոր հավելվածները եղել են պատշաճ վավերացված, սակայն չի հաջողվել բացել հավելված 9-ի էլեկտրոնային ստորագրության համապատասխան դարանը՝ ստորագրող անձի տվյալների իսկությունը ստուգելու համար:

7. Կենտրոնը 30.01.2017թ. թիվ 01/04.1/247-17 գրությամբ դիմել է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին խնդրելով հայտնել՝ «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից PDF ձևաչափով ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ հավելված 9-ը և հավելված 4-ը, համարվում են արդյո՞ք էլեկտրոնային ստորագրությամբ պատշաճ վավերացված, թե՝ ոչ:

8. Վերոհիշյալ գրությանն ի պատասխան՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ-ն 31.01.2017թ. թիվ 010/01.17 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից PDF ձևաչափով ներկայացված հավելված 4 էլեկտրոնային փաստաթուղթը կնքված է Լարիսա Գասպարյանի, ՀԾՀ՝ 6109570095, էլեկտրոնային ստորագրությամբ և հանդիսանում էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված վավեր էլեկտրոնային փաստաթուղթ, իսկ ***PDF ձևաչափով ներկայացված հավելված 9-ը՝ 4 էջից բաղկացած էլեկտրոնային փաստաթուղթը, չի կրում էլեկտրոնային ստորագրության տվյալներ: Չի հաջողվել բացել էլեկտրոնային ստորագրության համապատասխան դարանը՝ ստուգելու տվյալ անձի էլեկտրոնային հավաստագրերը և այլ մանրամասներ:***

4. ԳԲԽ-03/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 09.02.2017թ. եզրակացությունը և առաջարկել է «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի 23.01.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի 23.01.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի գրությունը և կից փաստաթղթերը, ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի 31.01.2017թ. թիվ 010/01.17 և Երևանի քաղաքապետարանին ուղղված գրությունները, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ

նաև՝ Կարգ), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը, գտնում է, որ «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի 23.01.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

○ ***էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ՝*** պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար,

○ **էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր՝** փաստաթուղթ՝ թղթի, էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա, որը հաստատում է ստորագրող անձին էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և էլեկտրոնային թվային ստորագրության պատկանելիությունը և ծառայում է էլեկտրոնային թվային ստորագրության իսկության ստուգման միջոց:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: «Ընդ որում, տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերի, որոնց ժամանակ ***Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.».

Կարգ 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 7.9 կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրել է, որ հնարավոր չէ գնահատել «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված թիվ 9-ի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելը՝ ուստի հանձնաժողովը որոշել է ընդհատել գնման ընթացակարգի բացման նիստը և հարցում ներկայացնել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին՝ Ընկերության կողմից ներկայացված հավելված թիվ 9-ի էլեկտրոնային ստորագրության իսկությունը ճշտելու նպատակով:

Պատվիրատուն 16.01.2017թ. գրությամբ՝ առաջնորդվելով, Ընթացակարգի հրավերով, ինչպես նաև ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված դրույթներով, հարցում է կատարել էլեկտրոնային ստորագրությունը սպասարկող ԷԿԵՆԳ ՓԲԸ-ին, վերջինիս տրամադրելով «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր հավելվածների էլեկտրոնային տարբերակները՝ խնդրելով հայտնել, արդյոք Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը համարվում են էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված, թե՝ ոչ:

Վերոհիշյալ գրությանն ի պատասխան՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ-ն հայտնել է, որ ***Ընկերության կողմից PDF ձևաչափով ներկայացված հավելված թիվ 9 փաստաթուղթը*** չի պարունակում որևէ անձի էլեկտրոնային ստորագրություն: Ենթադրվում է, որ այն ստորագրված է եղել Գասպարյան Լարիսայի (6109570095) կողմից, սակայն փաստաթղթի կոնվերտացիայի ժամանակ էլեկտրոնային ստորագրությունը փոփոխության է ենթարկվել: Հետևաբար, նշված փաստաթուղթը ***չի կարող համարվել էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված փաստաթուղթ***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նիստի թիվ 3 արձանագրության 1.3-րդ կետով արձանագրել է, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն՝ «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված թիվ 9-ը, որպես էլեկտրոնային փաստաթուղթ չի կարող համարվել էլեկտրոնային ստորագրությամբ ամրագրված էլեկտրոնային փաստաթուղթ, ուստի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության 2.2 կետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Կենտրոնը 30.01.2017թ. թիվ 01/04.1/247-17 գրությամբ դիմել է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին խնդրելով հայտնել՝ «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի կողմից PDF ձևաչափով ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ հավելված 9-ը և հավելված 4-ը, համարվում են արդյո՞ք էլեկտրոնային ստորագրությամբ պատշաճ վավերացված, թե՝ ոչ:

Վերոհիշյալ գրությանն ի պատասխան՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ-ն 31.01.2017թ. թիվ 010/01.17 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից PDF ձևաչափով ներկայացված հավելված 4 էլեկտրոնային փաստաթուղթը կնքված է Լարիսա Գասպարյանի, ՀԾՀ՝ 6109570095, էլեկտրոնային ստորագրությամբ և հանդիսանում էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված վավեր էլեկտրոնային փաստաթուղթ, իսկ PDF ձևաչափով ներկայացված հավելված 9-ը 4 էջից բաղկացած էլեկտրոնային փաստաթուղթը չի կրում էլեկտրոնային

ստորագրության տվյալներ: Չի հաջողվել բացել էլեկտրոնային ստորագրության համապատասխան դարանը՝ ստուգելու տվյալ անձի էլեկտրոնային հավաստագրերը և այլ մանրամասներ:

Նիստի ժամանակ ԳԲԽ-03/17 բողոքը քննող հանձնաժողովը ուսումնասիրել է Ընկերության կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված հայտի PDF ֆայլերի էլեկտրոնային ստորագրությունները, բոլոր հավելվածները եղել են պատշաճ վավերացված, սակայն չի հաջողվել բացել հավելված 9-ի էլեկտրոնային ստորագրության համապատասխան դարանը՝ ստորագրող անձի տվյալների իսկությունը ստուգելու համար:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն, մերժելով Ընկերության հայտը, գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի 23.01.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

Անդամներ՝ **Ռոման Մարդոյան**

Հրաչյա Ավետիսյան